քին առց աւելի արժէքով ու իրաւունքով կը ներկայա-  
նան քան հայր. քմածին անէքտոտ մի կարծէք, եթէ  
ձեզի պատճեմ թէ անցած տարի հայ մասկաճառ մը

անտանելի ու վնասակար փողոցի շան մը դարկած ըլլալուն համար մէկ սակի տուգանքի դատապարտւեցաւ, մինչդեռ եթէ նոյն այդ հայր իր անձնական ունե մէկ վնասի հատուցման համար դատարան դիմած ըլլար՝ յայտնապէս պիտի վոնտւէր:

Երկու տարիէ ի վեր Խարբերդի հին քաղաքը գայագամութեան փոխւեցաւ, դէպքին աղետալի հետեանքը իրենց շահերուն ի նպաստ յարմարցնելու համար թիւրքերու կողմէն տխմար փորձ մըն է ասիկա, որովհետև ջարդի թւականէն անմիջապէս ետքը հայ վաճառականներ նոր քաղաքը՝ Մեզիրէն փոխադրւեցան, ուր համեմատաբար թիւրք խուժանը սակաւ և հետեաբար կեանքի ու ստացւածքի ապահովութիւնն ալ աւելի երաշխաւուած կրնար ըլլար, այս լքումը մեծապէս վնասեց թիւրք կալածատերերուու և իւլէմա դասակարգին, քանի որ խանութներու մեծամասնութեան սեփականութիւնը ասոնցն է և ասոնց վարձքովը կապրին իրենք. հին քաղաքը այսպէս առուտուրի կեդրօն ըլլալէ դադրելով՝ դատապարտւած պիտի ըլլար հետզիւտէ քայքայւելու և օր մըն ալ անքնակելի ըլլալու: Թիւրք տարրը այս իրողութիւնը հակակշռեցու համար փորձեց գայմագամութեան վիրածել քաղաքը և ասով մեռելացած վայրի մը արւեստական կենդանութիւնը տար Շատ փորձերէ ետք, վերջապէս յաջողեցան իրենց բաղձակի նպատակին հասնիր Հայերը գիտէին թէ եկող գայմագամը նոր չարիք մը պիտի դառնար իրենց գլխուն, որովհետեւ կարգ մը մէտրէսէներու մէջ որջացած իւլէմաններու պարզ խաղակեք պիտի ըլլար: Եւ անպէս ալ եղաւ, նշանակւած գայմագամը անման սրիկայ մըն է, որ էն աղտոտ ու անբարոյական մարդոց մտերմութիւնը կը փնտոէ միշտ և անոնց հետ կապրի քիթ քթի, գինովութիւնը մինչն ի լոյս գլուխէն չի թափիր և իր պաշտօնատեղին այ, ուր շաբաթւան մէջ երկու օր և օրն ալ երեք ժամ կերթայ անցնել՝ միշտ գինով ախտաւորւած հակամարդկային ամենազգելի անբարոյականութեամբ, գեղեցիկ տղու մը ետևէն անգղի թառաչով կը նայի ու կը հեկեկայ: Իր նշանաւոր գործն եղաւ կառավարական պաշտօնատան մը հիմնարկութիւնը, որ երկու տարիէ ի վեր սկսած և վերջացած չէ: անշուշտ պիտի խորհէինք թէ այդ շէնքին յատկացւած ծախքերը, կառավարական սնուուկը հոգաց, բայց պէտք է գիտնաք թէ այդ սնուուկը այնքան դատարկ է որ երբ տարիին քանի մ'անգամ կը յաջողի իր պաշտօնեաներուն ամսականը հայթայթել՝ օսմաննեան պաշտօնական թերթերը գոհութեամբ կը տարփողին ու կը հոչակեն կայսերական բարեհան իրադէն:—ոչ, այլ հայթայթւեցաւ և կը հայթայթւի բռնի հանգանակութեամբ (իրանէի մէսարիով), որուն մէծագոյն բաժինը վիճակւած է թալլւած, կողոպտւած և կոտորւած հայուն: Եւ տեսէք թէ ինչպէս ամենամծ, նշյանպէս ամենաշնչին պարագաներէն իսկ օգտուիլ գիտէ թիւրք կառավարութիւնը՝ վնասելու հայուն ամէն բանով ու ամէն բանի

բահէրը, բրիչները գործի սկսան և օտարի այդ շէնքերը՝ առանց տէրերուն հաւանութեան՝ քակւեցան, տարտղւնեցան և գրավւեցան:

Այսպէս, կը հարստահարինք մեր աջէն ու ձախէն, ամէն քայլափոխի ու ամէն պարագայի: Ամենափոքր բողոքը կամ դիմադրութիւնը՝ սոսկալի թշնամանք մը կը մէկնսի և որը պէտք է տուժենք չարաչար կերպով: Ի՞նչ ընենք, ո՞ւր երթանք, մեզի կը պատփիրեն որ չի պանդխտենք, սակայն անօթի կը թողուն մեզ: մեր աշխատանքէն մեզ կը զրկեն ու բողոքելու իրաւունքն անդամ մեզմէ կ'առնեն: մեր առջև պանդխտութեան ձամբաները կը փակեն ու մեր պանդուխտները ներս չեն առներ, զաւակը իր հօր կարօտովը ու հայրն իր զաւկին սիրովը կը մեռնի և գթացող չի կայ, ի՞նչ ընենք, որու դիմենք:

Բայց բոլոր այս հոգեվարքին ու չարչարանքին մէջ որոշած ենք երբէք չի կորմնցնել մեր արիութիւնն ու կորովը որովհետեւ դարաւոր հալածանքներու զաւակն ենք և դիմադրութեան վարժւած մեր բոլոր անսասան հոգիովը, ցաւի բլուրներուն վրայէն մէկը անթարթ ու անձկութեամբ կը նայինք Բարելոնին, որ ահա իր անիրաւութեան, զեղսութեան ու շւայտութեան պարիսպներուն տակ կը քայքայի և որոնց տակ պիտի անչետանայ սմբողջովին:

## ԿՈՎԿԱՍԱՍԱՆ ԽԱՐԻԿԱԿԱՆ

ՏԱՄԱՆՅՈՒԹԾՈՐՈՂ ՆԱՄԱԿ

ՊԵՄԵՐԲՈՒԹԳ, 23 ՆՈՅԵՄԲԵՐ

Ամէն անդամ, երբ անցնում եմ՝ ՊԵՄՈՅԱՎՈՂՎԱԿԻ մոտով — կայ մարդ, որ լսած չլինի այդ անունը — անհասկանացի մի գդացմունք բոպէչաբար պատկերացնում է իմ առաջ ամբողջ գոնիքակ նուսաստանը: — բանային աշար հար հը իր անթիւ սպասաւորներով, բանտապետներ, ոստիկանութիւն, լոտեններ, ժանդարմներ, այնքան բազմաթիւ, այնքան մեծաքանակ այս գժբախտ երկրում:

Եւ Պետերբուրգի Պետրոպավլովսկը, ժանդարմների կենտրօնական վարչութեան հետ միասին տանում է գրգռւած երեակայութիւնը դէպի աւելի հեռուն, դէպի գաւառական մծ և փոքր քաղաքները, ամէնքն էլ հարուստ իրենց տեղական պատիկ Պետրոպավլովսկիներով, ուր տնըում է շղթայակապ միտքը, յափշտակւող, յոյզերով լի երիտասարդ սերունդը...:

Թիֆլիսն էլ ունի գրանից:

... Աշնանային մի գեղեցիկ օր, երբ Պետերբուրգից մի փոքրիկ ճանապարհորդութեան համար թիֆլիս գնացած, անցնում էի նաբերեժնայա փողոցով, յանկարծ մի նոյնաշնչն տան առաջ էանունեց մի փակ, կառք որից շուրջու ժանդարմ. կանդ առայ և նայում էի միամտաբար: նոյն այն միջոցին, երբ կառքից իջաւ բանտային շորերի մէջ փաթաթւած մի երիտասարդ՝ ահաբեկ դէմքով, ժանդարմը մի ձեռքով նրան բռնած, միւսը ինձ ուղղեցով, գոչեց. և եւոնք, ի՞նչ եր ինչէն: Երբ մի աղա

կառապանը, որ փափախը հանած գլուխն էր քորում և քիչ վերեւ՝ փառաւոր ցուցանակը՝ ժանդարմը սկզբ պրավի էնի է...

Եւ ամեն անդամ, երբ անց եմ կենում Պետրօսավոլովսկի մօտով, միշտ յիշում եմ ահարեկ նրատասարդը, այդ կենդանի մարմնացումը ահար եկ ազատութեան, զլամաքոր կառապանը, այդ գոճախտ մարմնացումը տգետ ամբ ի տա մը ոխի և փառաւոր ցուցանակը, այդ ինքնավատահնշանակը անսամնձ միա ապետ ու թիւ ան և մի ձայն, որ հնչում է անդադար. հեռու, հեռու...

Հանդիսատ էր կովկասը. չուներ նա իր „մայիսի մեկը“ և ոչ էլ մամակցութիւն արդարայապան դաւագրութիւններին: Հոսում էր, այն, շատ տեղեք արիւնը մարդկարին, բայց դա կամ կովկասեան լեռների բարձր ծերպերում, ուր խիզախ լեռնականը կուրծք էր տալիս բնատուր ազատութեան համար և կամ մահմէդական սահմանների վրայ, ուր ուսւ զինուրականը արիւն էր առաջիս ոյանուն քրիստոնէութեան: Սակայն այդ շրջանը անցաւ. պատերազմները գադարեցին, երկդլխեան արծիւը տնկւեց սահմանների վրայ, և ահա սկսեց երկորդ պատերազմը, բիւր օկրա ատի այլ պատերազմը, իր նոր զինուրներով—ոստիկաններ, բանտավետներ, լրտեսներ, ժանդարմներ, աւելի ծանր և աւելի երկիրդալի, թէկ առանց հրացանի:

Կովկասի համար, կամ աւելի ճիշդ, հայերի համար ութուունական թւերից է սկսում այդ գոժախտ շրջանը: Ալեքսանդր III-ի տիուր թագաւորութիւնը ուժ տևեց, սրբագործեց արդէն արտեղ և այնտեղ գոյութիւն ունեցող շրաբիւ ծրագիրները և այդ օրունից սկսեցաւ բանդարմների և ժանդարմների միահեծան թագաւորութիւնը:

Հազարներով են դրանք. միլիոններ են կյանում, ծծում են ժողովսդի դրապանը և մարդկային միտքը, ինչպէս անկուշտ տզրուկներ և ուրեմն պարտաւոր ապացուցանելու, որ անխուսափելի է իրենց գոյութիւնը, ինչպէս և առանց իրենց խախուտ պետութեան գոյութիւնը:

Ահա թէ ինչու ամենաբարեիլիդ, սառնամիրա և խոր ուսումնասիրութիւնը եղած փատերի՝ մի բան է միայն ապացուցանում, որ Հարիւրից ինսոււն հինգ դեկտեմբեր ինքը ժանդարմը, ոստիկանութիւնն է, որ ստեղծեց „պատամութիւններ“, քաղաքական „շարժումներ“ և ոչ թէ կ ե ան քը, որ տարաբախտաբար այնքան լրացան, միապաղաղ և այնքան կայուն է այս գուացած երկում:

#### Փառատեր:

Խաղաղ էր երեւանը, ինչպէս ինքը Արարատ, որի հոգանու տակ նա տարրում է այսքան գարեր: Մարդիկ իրենց գործին էին գնում, խօսում այն՝ ինչ որ թոյլ էր տւած և կարգում այն՝ ինչ ցենզորն էր հաւանել. բայց ահա մի ժանդարմ, սիրահար արկածների, և ֆրէյգանկ, տենչացող աստիճանների, ստեղծագործեցին ո հայկական գործը՝ և կազմեցին ցուցակ այն մարդոց, որոնց ներկայութիւնը, իրենց կարծիքով, վտանգաւոր էր եր երեւանում: Ամեն բան կար այդ ցուցակում. և վարժուչի Գայանէ Մատակեան, և փաստաբան Զալյախեան, և կալւածատէր՝ Եղիազարեան, և նոտար՝ Վարդանեան, և ծառայող՝ Տէր Զաքարեան, և իրաւագէտ՝ Մատակեան, և վաճառական, ո՞ր մէկի անունը տանը... Հարգաւոր էր սակայն մի ուեւ առիթ: Եւ ահա մի մութ գիշեր, այնքան յարմար գողերի և լրտեսների համար, ժանդար-

մական վարձու գործակալներից մէկը, ծածուկ, իհարկէ, մի թուղթ նետեց քաղաքացիներից մէկի տան ներքնայարկը... Միւս առաւուս սկսւեց ամենախիստ խուզարկութիւն այդ տան մէջ: Խուզարկովները քաջ գիտէին թէ ինչ են փնտուում—այն թուղթը, որ պարունակում էր „Հայկական յեղափոխական շարժման“ մի ծրագիր և անունների մի ամբողջ ցանկ: Եւ դա եղաւ կասկածների մի հիմնաքար, որին յաջորդեցին բանտարկութիւններ, աջոր, որ չ'անցաւ առանց մահի, և անփերջ կասկածներ այդ զոհ-քաղաքում:

#### Ծայրը բացանց:

Ամենատես ժանդարմները գտան, որ Երևանից նամակ է գրած Թիֆլիս, Հետն էլ մի գումար, ոչ իհարկէ: Կէս միջին, անհրաժեշտ մի քաղաքական շարժման համար և ոչ նոյնիսկ 65 հազար, անհրաժեշտ ծախը մի նմբի զինվարութեան, այլ սոսկ 65 բուրի, այն էլ բարեգործական նպատակով: Բայց և այնպէս Թիֆլիսում էլ ժանդարմները սկսեցին խուզարկութիւններ: Եւ սա եղաւ սկիզբը ուրիշ խուզարկութիւնների, որոնք մինչև արժմ էլ չ'են դադարում: այդ քաղաքում:

1887 թիւն էր, ամբողջ վրաց հասարակութիւնը սբաւոր, խոյը սրառումը հետևում էր մի տխուր դադաղի, որի մէջ հանգստանում էր պատկառելի Հայրենասէրը, զոհ ողբերգութիւնը հիպահանին էր դաստիարակութիւնը ամբողջ վրաստանին էր պատկառեց ասել Թիֆլիսի ոռու էքզարիսին, իրու արձագանք վրաստանին էր ուժում գնալ բողոք տալու և այդ անախորժ բողոքը լուցնելու նպատակով բարուր համարեցին նրան ըստեցնելու—մի գիշեր նրան սպանած գտան իր սենեակում գաղտնի ճանկերով... Եւ երբ տխուր դնացքը անցնում էր Գոլզինսկի Պրօսպէկտով, ոստիկանութիւնը յարմար առիթ գտաւ դարձեալ պատմութիւնը ստեղծելու նա պահանջեց գէպի այլ փողոց դարձնել յուղարկանուրութիւնը, որ նա համարում էր ցոյց կառավարութեան գէմ: Աստիվանութեան սլերի գէմ իշխանների սրեր մերկացան. Հազիւ գոժախտ դագաղը ազատ մնաց անմեղ արիւնով ներկւելուց: Աստիկանութիւնը տեղի տւեց, բայց ժանդարմների վարչութիւնը ստեղծեց մի ամբողջ գործ, վրացիական շարժման մի ահագին պատմութիւն, թմթերի մի ամբողջ արխիվ...

#### Արացիներից աւելի գոժախտ եղան հայերը:

1892 թիւն, երբ նոյն Գոլզինսկի պրօսպէկտով անցնում էր Գրիգոր Արծրունու դագաղը, շրջապատած իիսուն հազար ժողովրդով՝ զշտաբեկ և յուղւած. Թիֆլիսի ոստիկանութիւնը գտնելով հակա ակա ակա գարձնել ժանդարմների ժողովրդութեանը ալիքները—սուրը ցցւեց խաչառի գէմ, ժանդարմնի սառը գէմը՝ ալյալշած ամբոխի գէմ... Եւ եթէ „Փառքի տաճարի“ սալայատակները չներկւեցին մարդկապին արիւնով, այդ այն պատճառով միայն, որ զինուրական ուժը չդիմացաւ ժողովրդի գրոհին... Եւ մեւս օրը, երբ ամբողջ քաղաքը գեռ սուգի մէջ էր մեծ կորստի պատճառով, ձերբակալութիւնները սկսւեցին: Մի քանի ժամանակ մէջ արդէն գէպի բանտ և գէպի պօլիցիական բաժիններն էին քցւում ամեն դասակարգի մարդիկ, իրու գրդական գիշերիցին ու մէկ գոյութիւն յարմար գողերի և լրտեսների համար, ժանդար-

մական վարձու գործակալներից մէկի, ծածուկ, իհարկէ, մի թուղթ նետեց քաղաքացիներից մէկի տան ներքնայարկը... Միւս առաւուս սկսւեց ամենախիստ խուզարկութիւն այդ տան մէջ: Խուզարկովները քաջ գիտէին թէ ինչ են փնտուում—այն թուղթը, որ պարունակում էր „Հայկական յեղափոխական շարժման“ մի ծրագիր և անունների մի ամբողջ ցանկ: Եւ դա եղաւ կասկածների մի հիմնաքար, որին յաջորդեցին բանտարկութիւններ, աջոր, որ չ'անցաւ առանց մահի, և անփերջ կասկածներ ներ այդ զոհ-քաղաքում:

189-ի չհասաւ, այդ շնորհիւ միայն խաղաղասեր կառավարչապետ Ընդհանուր պետը որ անձամբ միշտ մեջ զետերը գույքութք ծանօթարմանը մէջ այդ գէպքը այնուամենայիւ աւելցրէց մի նոր գլուխ ոհարկան գործին։ թէև չկար հարիւրերորդ մասն անդամ այն ցնորամբ ենթադրութիւնների, որոնցով բւնւած էր այդ հիմնարկութիւնը։

Եյդ գէպքից տասը որ միայն անշնչ, սոտիկանութիւնը ստեղծեց աշխարհին պատմութիւնը պատմութիւնը, այնքան ողբերգական սկզբում որբան զանշտական վերջում, ապա հայ զինուարների պատմութիւնը, որ բարեբախտաբար դուրս չեկաւ զինուարական շտաբի պատմերից և աշաց անյայտ հայ հասարակութեան։ Յնտոյ, քիչ անցաւ, հանդէս եկաւ թիֆլիսի թիւրքաց հետպատուս սպանութեան փորձը հայերի ձեռքով, կատարելապէս անձանօթ հայերին, բայց այնքան ծանօթ ժանդարմենը վարչութեան։ . . .

Խսկ հջմիածնի՞ դէպքերը։ Մը երեկոյ—1893 թւեն էր այդ մեր գնանականները վերջացրած միապաղաղ ազոթը, վայելում էին բամբառ ասանքի սրտագրաւ ժամերը, յանկարն զինուորները շրջապատեցին վանքի մուտքերը։ անկիւններում փայլցին սուխններ, խուցերի առաջ համազգեստներ, և երկիւղաբեր խստութեան մէջ կատարւնցին ձերբակալութիւններ։ Ո՞վքեր էին, երկու հպիսկոպոս Սուցիաս և Ներսէս, յայտնի իրենց տիրապիրութեաւը։ Մեծ ազմուկ, իրարանցում ամբողջ հայ հասարակութեան մէջ, հազար ու մի ենթադրութիւններ, լուրեր նորսէս, որ հայոց կրօնականների կննարօնը լիքն է զէնքներով։ Եւ այդ բողոքից յետոյ, դեռ տարին չըսցած, երկու եպիսկոպոսները յետ բերեցին աբոսրից։ և իրեւ վարձատրութիւնն մէկը արգէն թեմական առաջնորդ է Բեսարաբիա, կայսերական հայ անութեամբ, իսկ միւսը պատրաստուում է լինել թիֆլիսի առաջնորդ, նոյնպէս բարձրագոյն հաւանութեամբ։ Եւ այժմ կազինէտի խորքերում գաղտնի տեղիկագրեր գրող պաշտօնեան, քթի տակ մընջում է անկասկան։ Անթէր միթէ։ . . .

Սակայն այդ խրատը բաւական չեղաւ, երկու ուսարի յետոյ աքսորւեցին երկու վարդապետներ՝ Վահան և Նահապետ, և ջիչ յետոյ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն էր, որ փառական անքան ստացաւ իր հունտօրական բերանին, լոկ այն պատճառով, որ կարողացաւ իր ուժդին խօսքերով ցնցէլ հագուի հարուստ դասակարգը, համոզելով նւէրներ տալ յօդուտ հայկական սէմինարիայի, որ գեռ հօնական թւականներից պիտի բացւէր թագուի թեմում, բայց որը չէ բացւում մինչեւ այսօր։ . . . Յօդուտ դպրոցի

եղած հրաւերի մէջ ժանկարմային վարչութիւնը եկի նշյարեց պրօպագենդ, զէնք, ապատամբութիւն և ձերմակահներ գարողիչը այս անգամ էլ ստիպւեց կիսակատար թողնել գործը և քաշել մենաստան։ Եւ 1897-ին, երբ կառավարութիւնը անցագիր չէր տալիս նրան՝ անցնելու Պարսկաստան առաջնորդի պաշտօնով, աներկիւղ եպիսկոպոսը կատարելապատճեն ներկայացաւ իմանալու իր յանցանքը։ Իշխան Գոլիցին, յաճախ դատարկութեան միայն յատուկ խորհրդաւորութեամբ՝ պատասխանեց, որ ագուի ձեր գործունեութեան մասին աննպաստ տեղեկութիւններ կան։ . . . Պարսկաստան կարող էք գնալ միայն մի պայմանով որ այլևս յետ չդաք։ Եւ այդ ան պատճեն տեղեկութիւնների հեղինակը դարձեալ ստիկանութիւնն էր, իհարկէ, որ գպրոցական հարցը գաղտնի հարցերի վերածեց։

Եյդ սաննպաստ կարծիքները՝ այլևս դարձան ընդհանուր, առօրեայ, սովորական այն սրից, երբ հայկական խըրտումների լուրերը սահմանի այն կողմից եղան աւելի յաճախ, աւելի աղմկայոց։ Ամեն մի հայ, որ քնած չէր, համարեց վանդաւոր։ Դաւական էր մի խօսք, մի ակնարկ, մի փարբիկ բողզք, մի թեթև համակրութիւն, որ մարդ համարեւ մասնակից ոհայկական գործին, արժանի խուզարկւելու, արժանի բանտի ու աքսորի։ . . .

Ունայնաբան չլինելու համար պատեհ եմ համարում հասարակութեան աչքի առաջ գաւ գնել մի հետաքրքրական վաւեր առ գիր, որի խսկականը գտնուում է իմ ձեռքի տակ։ Դա մի գաղտնի ցուցակ է, կազմած թիվլիսի ժանդարմենի վարչութեան գլխաւորի ձեռքով, ուսուերէն։

Կարեւոր է իմանալ ի՞նչպէս ձեռք բերեց այդ գոկումնետը։ 1893 թւականին մի հայ քաղաքական բանտարկեալ ազատաւելուց յետոյ, երբ յետ է ստանում իր ձերքրակալած գրքերը, մի օր իր գիրը թերթելիս՝ գտնում է նրա մէջ այդ ցուցակը, որը կասկած չկայ, ժանդարմական պաշտօնեան, մոռացմամբ կամ շտապելով թողել է գրքի մէջ, որի երեսները նա, երեխ, ուշագրութեամբ քննում էր՝ գաղտնի մակագրութիւններ գտնելու նպատակով։ Երկար ժամանակ այդ գաւերագիրը իր մօս թագանելուց յետոյ, նորերս, նա մի վստահելի ժանօթի միջոցով ուղարկել է ոհրօշակի խմբագրութեան, խընդուրելով հասցնել ։ Ականական խարիների նովական խարիներից հեղինակին, ոդրանից ըստ արժանուոյն գոտեւելու համար։ Ընորհակալութեամբ օգտուում եմ, որովհետեւ դա մէկ փառաւոր ապացոյց է այն ճշմարտութեան, որ յայտնեցաւ վերև։ Ահա այդ ցուցակի բառացի թարդանութիւնը \*)։

### Յ Ո Ւ Ց Ա Ա Կ

ՀԱՅՈՒՅ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԳԻՏԱՏՕՐՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՄՈՏ ԿԱՐԵԼԻ Է, ՅՈՒՂՈՒ ԳՈՐԾԻ ՊԱՐՁՄԱՆ, ԿԱՏԱՐԵԼ ՄԻԱԺԱՄՄԱՆ ԱՅՅԻՆ ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ազգանուններ, Կոչում եւ զբաղվունք, Բնականներ

- Ա լ է ք ս ա ն դ ր Ս տ ե փ ա ն ե ա ն (Վանդրո) գրամափախ, Քաջայա Արիվայա 17 (5-րդ ու չաստ.)։
- Ա լ է ք ս ա ն դ ր Ս ո վ ս է ս ե ա ն (Ճիրվանգադէ) Աղքիւր-Ֆարազի խմբագիր գնացել է Խուսիսի։
- Ա ր ա մ Խ ա ր ա զ ե ա ն, քաղաք վարչութեան հաշտապահ, Օրբելեանօվսկ. 22, սեփական առն։
- Խ ա շ ա տ ո ւ ր Ս ա լ ո ւ մ ե ա ն, Աշակի աշխատակից, Մշակի խմբագրատուն, Քաղաքնայա 11։
- Տ է ր Ս ա ր կ ս ս ե ա ն Աշակի աշխատակից, Մարտյա-Բէդիսայինսկայա տ. Եվանգուլովի, 16։

) Յանկալի է, որ „Դրօշակի“ խմբագրութիւնը լուսանկարէ այդ վաւերագիրը, որ մի մեծադիր թերթ է շնոր հրեսից բարձրած, որպէս գի կարելի լինի հրամարակիւ ամենայն թշութեամբ։

6. Սիմեոն Զավարեան, ծառայում է ֆիլօքսէրիայի խմբում, Լաքօրատօքնայա, և. Ստատկովսկու:
7. Նիկողայոս Մատինեան, քրանսիական հիւպատոսարանի թարգման, Լաքօրատօքնայա:
8. Աշոտ Խումարեան, գրաշար, Մեշչանսկայա 5 (5-րդ ուշ):
9. Յովհաննես. Աղամիքը գետան, Առեւտրական բանկի հաշվապահ:
10. Յարութիւն Միքուզուեանց, գերձակ, (արձակւած) հնչակիստ, Զիգրաշենսկ. 1. խանութ 18:
11. Խաչատուր Արդանեան, առանց որոշ պարապմունքի, Ախալքալաքի քնակիչ:
12. Տուլակ Տէր Սիմոնեանց, հիւսն, Տ. Միջրզեանցի խանութում (գիշեր-ցերեկ):
13. Յակոբ Յակոբեան, ծառայող, յրօսիական ապահով ընկերութեան (արտեղ քաց ենք թող նում հինգ խօսք՝ կատարելապէս անյարմար տպագրութեան համար). հասցեն իմանալ չեղաւ:
14. Արտաշէս Սահակեան, Զալալզոլի գիւղում (Կանենկա):
15. Օհաննես, մշակ, ալիւրի պահեստ Թամաշենի քարգանսարայի տակը, Պուշկինսկ. (գիշեր-ցերեկ)
16. Արշակ Թագէս սեան, ծառայող ինժիներային դիստանցիայում, Քեդիսայինսկայա 1, սեփական տուն, ճանապարհորդում է (դրոշակիստ):
17. Ալեքսանդր Թագէս սեան, Թիֆլիսում չէ, Մոսկվա:
18. Յակոբ Թագէս սեան, ծառայում է Ներսիսեան գպրոցում, Բէջութովնեշայա 22, սեփ. տուն:
19. Երեմ Խանտամեան, կանդիտէր, Պետկովսկայա 4:
20. Ղազարոս Աղայեան, Խօվուարսէնայա 13:
21. Արամ Չմշշէկեան, հաշվապահ Շարքաբչեկի խանութում, Բաղազինանա:
22. Արամիանեան, խմբագիր, խմբագրատուն Մուրզիկ:

Ցուկ Տէր Միջրիսեանց գնել է զէնք եւ հասցել Ա. Խարագիսնեն (նրա մօտ պահում են զէնք եւ պատրօններ քէրտանկա): Սովորսկան Մարգար, յանձնելու նվիօտին. այս վաղ էր:

Մարտիրոսեանը ունի պահստ Արվեստի տանը:

### Յուլիս 29.

- Եզնիկ Իգիթեանց, ծառայում է Ալբագանքի խմբագրատան, հնչակիստ, Թիբահայատակ, կարծեօք առանց անցագրի. Թիւրքիայում մարդ է սպանել: Խմբագրատանը լինում է ժամը 2: Նարդիս Խանութում է առաջ ան օյեան եան, Բալշարա Կրիվայա 15:
- Արգար Յովհաննիս սեան, իրաւասու գումայի, Բալշարա Կրիվայա, և. Խանիալամովն 1:
- Դ. Ա. Արշութ Թեան, հնչակիստ:
- Սէրգէյ Արգուտինսկի 16-րդ Գրէն. Մինդրել. գնդի:

Որտե՞ղ էր առաջ ապրում Ալբանդը Միխայով Յակոբեանց:

Որտեղ է ապրում Օրթամայի Ժաշի Թամակա Գերասիմ Համբեան (Խչակիսոյ):

Որտեղ է ապրում Մուրադեան Թամակա Օրթամայի:

Որտեղ են ապրում Ալբանդը Համբ-փարուխեան, նգոր Համբ-փարուխեան (նրա եղանյով):

Սապարէթը եկաւ Թիւրքիայից (հասարակ մարդ, հնչակիստ):

### Ալեքսանդր Լըզվով Ղուկաս սեան:

Ալեքսանդր Կարապետ Մարտին ան եան (զէնք գնող), Լաքօրատօքնայա 37:

Սարգիս Մարտին գործակատար Էնֆիշենեանի խանութ. Դավիթօվնեկի փող. (հնչակիստ): Մեծատու բեան, Կօրդանովի շերամատանը, Ավշալմկայա փողոց. Մեծ քանակութեամբ հայ լրացիներ ե բրոցիւլներ:

Պատեհ էր նուրակրութեան ենթարկել թիւկ նաւասարդեանին, Ալբագիր Արգար Յովհաննիսի անց ի նկատի ունենալով նրանց հասարական պեղքը, այլու նրանց գործելու չափազանց զգոյշ նկանակ: Ծոցմոննենի եւ - խորհուրդներ տալիս են միայն խօսքով, ենթալում եմ, որ նպատակայարմար է նրանց կամնել դիւնատուն եւ անսեն ներշնչում եւ նախազգուշութիւններ:

Արդիւնքը այդ գաղտնի գումանէն մէն տի, ինչպէս և դրա նման շատերի, կազմած ենթարկաբար, էժանագին լրտեսների ցուցմունքներով կամ ազգայնական ատելութեան մաղձով, եղան կատաղի խուզաքիութիւններ, բանտարկութիւններ, աքսոր, որոնց ամբողջ սարսափը դուք կը տեսնէք, երբ ես կանցնեմ իմ նկարագրութեան մէկ ուրիշ գլխին — բան տերին:

Այս հալածասէր քաղաքականութեան այժմէութեան նորագոյն նշաններից մէկն էլ այն է, որ նաև հայկական շրջաններից անցնում է դէպի ուրիշ շրջաններ, դէպի վրաց ականքի արդար առաջարկան նշանները անցնելու ձգտումով: Նշանը արդէն տրաւած է. մայրսի 1-ին թիւլիսի դէմօկրատ փողոցներից մէկում՝ երեւաց կար մի իր դրօշակատած համարեայ բոլոր ազգերի ներկայացուցիչներով, իբրև հա-

կաբընապետական բողոքի մի նոր նախագահը, ոչ աւետում է աշխատատարութիւն այնքան գեղեցիկ ապագայ: Կառավարութիւնը սոսկաց: Դեռ հաշեւը չվերջացրած ազգայնական շարժումն չէա, նա իր միջնորդներին նկատում է մի այլ նոր շարժում, որ սպառնում է չքայնել իր փայփայած պօլիտիկայի արդիւնքը — առէցեցի ներքին թշնամութիւնը: Ահա թէ ինչու Պետերբուրգից ուղարկւած հրամանների համաձայն սկսեցին խուզաքիութիւններ ու ձերբակալութիւններ վրացիների մէջ, որոնք գենու երէկ համարում էին այնքան ոբարեմիտն և այնքան ոհաւատարիմն, որոնք գենու երէկ և գուցէ այսոր ոբարձագիր չենամիների կողմէց առաջադրութեամբ են հայերին իբրև օրինակ...

Տարաբախտաբար Արաւատանի միացման հարիւրամեակը ցըեց ամպերը, ուտուեց քաղաքական դիմակը: Առաջ-

մարութեան ձեռքով կազմակերպւած այդ հանդէսները, փուչ, ինչպէս պղպամակ, պաշտօնական շրջանակից գուրս չեկան, վրաց ինտելիգէնցիան մնաց ապօւշ կտրած, լուս վիշտը սրտի մէջ իսկ ժողովարդը անմասն, բերանարաց... Եւ իբրև ապօթէօղ այդ տխուր տեսարանի, անպատւաքեր նոյնիսկ ոչ-ազատամիտ Յուսաստանի պատմական գերին, պաշ շ ա բ մ ա ն գրութիւնն էր, որ յայտարարեց կամկասեան մայրաքաղաքում, հենց տօնական օրերին, միացած լրտեսների նորագոյն բանակի՝ դջօր նիկն երի կազմի հետ, իբրև անժիւտելի ապացուց այն բուռն երկիւղի, որ զգում է ուխտադրուժ կառավարութիւնը 100 տարի անցնելուց յետոյ իսկ այն քաղաքում, ուր կանգնած է իշխան Աօրծնցօվին արձանը և որի փողոցներով երթեն անցնում էր հայկական զօրագունդը, իբրև առաջապահ ուսւաց բանակի... .

Եւ եթէ ձեզ, վրացի ընկերներ, կը հարցնեմ, թէ որն  
էր հարիւրամեայ տիրապետութեան հանդէսի ամենամեծ  
ակտը, պատասխանեցիք...

— Պաշտպան դրսւթեալը

Էսկ եթէ մի օր եւրոպացի ճանապարհորդը թիֆլիս  
գալրվ կը դիմէ ձեզ, յուսահատ թիֆլիսեցի, իմանալու,  
թէ որն է ձեր ամենամեծ շնորհը ստացած 20-րդ դարի  
շնորհն, իշխան Գոլեցինից, մը Ռուսացնք՝

— Ты что-то прошу?

Հերիք է, զնանքը բանտերը. . .

Բ. ԱԿՆՈՒՆ

1991թ., ԳՐՈՒՂԱԿԱՆ ՀԵ ԼԵԶՎԱՆԻՆԻՐ

## ՀԱՄԱԿ ԽՐԱՅՔՐՈՒԹԵԱՆ)

Ելեցարիս, 20 զեկութեմբեր

Ժամանակակից լեհական պրոպագանդի հայերին համար շատ ուսանելի կորուստ ունեն հիմնած լեհական ազգին ընկերի վրայ՝ ևս կը ներկայացնեմ համառօտ կերպով այդ պրոպագանդի ընդհանուր պատկերը, նրա ամենակաքեռորդ գործ նները:

ի նկատի ունենալով, որ դպրոցական դասաւանդութիւնը ուսուական է եւ հսկազդային, ընտանիքը պէտք է զգում հակալիշուելու երեխաների մատաղ հոգու վրայ արևած վտանգաւոր եւ ընկճող ազդեցութիւնը։ Դրա համար ընտանիքներում մատաղ սերմալն աւանդում են իւն լեզուն, պատմութիւնը եւ գրականութիւնը։ զար-

գացնում են նրանց մէջ՝ անձնազնութիւնն ազացնում քը  
եւ ճիզ են թափում խնդրել նրանց մէջ ստրկութեան,  
կոյր հնաշանդրութեան ողին, որով աշխատում են խմբերել  
նրանց գլուխում ինտուիքի այց ազդեցութիւնը ընդ-  
հանրապէս առելի ուժուղի է, քանի զարդարութիւնը եւ այսպիսով  
պատահնի զիննայինաները ընաելանում են մատադ հա-  
սակից աչքաբաց լինել, կոյր մղել եւ կազմակերպել  
կարելի է տեսնել 1/2-15 տարեկան պատահնիներ, որոնց  
ընկերութիւններ են կազմում, հանդախակութիւն են անու-  
րինց մէջ՝ արգելած զրգեր զներու եւ կարգալու համար  
Ազդային համերացիութեան ողին զարգանում է նոյնակա-  
մենաւատառապահաւ աշխակերտների մէջ:

Անցեալ տարի կրա մի շատ աչքի ընկնող օրինակը  
տեսանք. Մի ուսանող սպանել էր Վարչաւայի մնդովի  
մի պահութից. Նրա թագման համփսին՝ գիմնազիոնի  
մի աշակերտ գամբանական խօսեց հանդուցեալի՝ վրայ:  
Կառավարութիւնը կամեցաւ իմանալ նրա անունը. Հար-  
ցացննեցին սոլոր աշակերտներին (ժաւով երեք հարիւր).  
սպանուացին եւ խոսուումներ արին, բայց ոչինչ չկարո-  
ղացան իմանալ. չդանեւցաւ եւ ոչ մինը, որ իր ընկե-  
րովը մասնէր Մինչեւ անգամ երբ լեհացին ոռուսի հետ  
յարաբերութիւն է ունենում (ի բաց առեալ կառավա-  
րութեան պաշտօնեաները). Նա աւելի սիրով Գրաններէն  
է խօսում, քան թէ ոռուսերէն, այն աստիճան խորշուա-  
է վերջինից. Քաղի զրանից աշխատում են որչափ կարմլէ-  
է քիչ յարաբերութիւն ունենալ կառավարութեան զա-  
նազան ներկայացուցիչների հետ, ինչպէս օրինակ սպա-  
ներն են Ռուսի հետ աճումնացողը նմանապէս շատ  
անյարդի է:

Կուսի մը ֆակտոր եւս կայ. դա կրօնն է, մասնաւանդ գիւղական դասի մէջ. Եաա ցաւալի է, որ կրօնը կղերի ձեռքում աւաշարիմութեան համար մի արդեք է, որտվէւտեւ ինչնըստինքեան նա մի լաւ զինք է աշդայնական պայքարի մէջ. Եւ իրաւ որ գիւղերում բարոյական ազգեցութիւնը քահանայի ձեռքին է. նա է, որ գիմազրում է օրթոդոքս պօսի ունեցութիւններին. նա է, որ լինացնում է գիւղացիններին, որոնց ուսանում են զինւորական ծառայութեան մէջ. նա է որ արգելում է օրթոդոքսների հետ ամուսնանալ կրօնից պրկիլ դիւղացուն նշանակում է ուղղափառ պօսին յանձնել նրան, որ միասեւութեան ներկայացուցիչն է. Աշխատելով էաքօլիկ կրօնի պահպանման համար քահանան պաշտպանում է ռամիկ զասակարգի մէջ լինական ազգայնութիւնը, որովհետեւ ռամիկ համար կրօնական եւ ազգայնական գրացմունքը նոյնանում են:

Մբքաւմը գոյութիւն ունի նաեւ անստեսական հողի  
վրայ, Մի ազգի հարստութիւնը նրա ուժի կարեւոր  
գործօներից մէկն է: Այս պատճառով ինտէլիգենցիան  
որ հսկում է ազգային կուլտուրայի վրայ, աշխատու-  
է նոյնից երկրի ինչուստրիայի եւ վաճառականութեան  
զարգացման համար: Կազմակերպում են կրեդիտի բանկեր  
երկրաշրջութեան, ինչնական գործարանական ձեռնարկ-  
ներին նպաստելու համար: Ստեղծում են նմանապէս  
ընկերութիւններ՝ հասարակական առողջապահութեան  
վրայ հսկելու նպատակով: Ըստի ընկերութիւններ նպաս-  
տում են հաղորդակիցութեան նաև ապարհների ընդարձակ-  
ման, երկրի վաճառականութեան ուժ են ապահու:

Պերջապէս ամենատաք կոփւը մզում է բառ քազաքան ասապարիգում Սյանդ գործում են երկու մենակույզութիւններ. 1) 'Իմօկրատնայիշնալիստ և 2) Սօհիամանապիօնալիստ կուսակցութիւններ.

Այս կուսակցութիւնը գործում է պրոպագանդի միջոցով, գաղտնի թերթեր է հրատարակում եւ տարածում երկրի մէջ, կուսակցութեան բուն նպատակն է կազմակերպել երկրը այնպէս, որ նա պատրաստ լինի ապատամելքու պատեհ հանգամանքներում (ինչպէս օրինակ եւ բռպական պատերազմի դէպքում):

Սօցիալիստանացինամկիստ կուսակցութիւնը նոյնակէս շատ որոշ պրօվինց ունի: Նա ձգտում է 1) Լեհաստանի անկախութեան եւ 2) սօցիալիստական կարգերի հաստատման Սկզբում այդ կուսակցութիւնը իր ծրագրի մէջ չունէր Լեհաստանի անկախութեան կէտը բայց ժամանակի ընթացքում նա սահմանեց յարմարեւել կեանքի եւ միջաշվայրի պայմաններին, եւ իրեն վվաւող նախառակ զրեց քաղաքական ազատութիւն: Լօնգոնում, որ կուսակցութեան կեդրօնատեղին է, հրատարակւում են կուսակցութեան օրգանը եւ զանազան գրքեր ու բրոշւրներ, որոնք իտուսասման են տարւում գաղտագորի ճանապարհներով: Բացի գրանից, գործարանական կննարօններում կազմակերպում են բաղմաթիւ գաղտնի խմեր, որոնք թերթեր են հրատարակում: Վարչաւայրում հրատարակւողը «Խօրօսնիկն» է: 1900-ին ոռուսական ոստիկանութիւնը գրաւեց «Խօրօսնիկ» թերթի համուլը, բայց դա չխանգարեց թերթի հրատարակման: Երկու օրից կրկին լոյս տեսաւ նոյն թերթը, ի մեջ զարմանս կառավարութեան...:

Հարկ կայ արդիօք պնդելու, որ կ ովկ կ առում  
հայ ազգայնութիւնը ուստացման վտանգից ըստ կարելոյն  
գերծ պահելու համար՝ մեղ անհրաժեշտ է շատ կէտերում  
հետեւել լեհերի օրինակին: Ինչպէս տեսանք՝ նրանց  
պրօագանդի: մէջ վճռական դեր կատարողը գաղտնի  
գործունէութիւնն է: «Նականունէ» թերթի 1901 թ.  
№ 26, 27-ում կարդում ենք հետեւեալը.

«Քանից դուրս է գալիս, որ զբաքէտ զիւղացիների 50 տոկոսը (խօսքը կեհաստանի զիւղացիների մասին է). իր զբաքիտութիւնը պարտական է միմիայն զաղանի ուսուցման, որ այնքան եռանդուն կերպով հայածում է ուսուցման, կառավարութիւնը, բայց և՛ այնպէս չի կարող արմատախի անել»:

Ազգային խնդրապահութեան համար մղելիք պրօ-  
պագանիդի վիճաւոր միջոցները մեզ մօտ եւս պիտի լինին՝  
1) ընտանիքը 2) մայրենի լեզվի գործածութիւնը 3) ըստ կա-  
րելոյն ապանովումը գիւղական ապահովակութեան, Այս  
վրային կէտի վրայ կուզենիք փոքր ինչ ծանրանալ:  
Ի նկատի ունենալով, որ մեր գիւղացին նեազիւտի զրկում  
է իր հողից եւ այդ հանգամանքը նպաստում է մեր գիւղերի  
գատարկելելուն, ուժեղացնելով հուանքը գէպի քաղաքները  
անհրաժեշտ է հայ բարեգործների ու շաղութիւնը հրա-  
ւիրել այս երեւոյթի վրայ, որովհետեւ այն ահազին գու-  
մարներից, որ այդ բարեգործները թողնում են զանազան  
քաղաքացին հաստատութիւնների հայ ազգաբնակութիւնը  
գրեթէ չի օգտում, այլ զանազան նահանգապետներ  
իրենց քմահան տրամադրութեան նայելով, գործածում  
են ռուսական շահերն առաջ տանելու համար Սյա մի  
կողմից: Միւս կողմից մեր մամուլի մէջ յաճախ ձայներ  
են լուսում, թէ գիւղական դասակարգին պէտք է ծա-  
նօթացներ հողի մշակութեան նոր մեթոդների հետ:  
Մինչեւո գիւղական ազգաբնակութեան թշւառու-  
թեան զիստաւը պատճառը ոչ թէ նոր մեթոդներին  
անծանօթ լինեն է, այլ զիստաւը աչք հողի եւ ջրի  
պակասութիւնը, թող հայ բարեգործները հայ գիւղացուն  
տան. հող եւ միջացներ ջուր անցկացնելու համար ան-  
մշակ հողերի վրայ, որովհետեւ ջրի պակասութիւնն է  
պատճառը, որ արտերը երաշտից չօրանում են եւ որով  
կատրում է հայ գեղջուկի մէջքը: Այս միջոցը իր  
տեղում կը պահէր գիւղական ազգաբնակութիւնը եւ կը  
նորասահեր նրան աժման ու զարգացման—մի հանգամանք,  
որ ամենալաւ. միջոցը կարող է համարել ազգութիւնը  
պահպանելու համար Երեւաննեան նահանգի մի քանի  
գիւղեր. հողի պակասութեան պատճառով միայն ընդունել  
են ռուսապատճենութիւնն: 4) Պրօպագանդ հասարակու-

թեան բոլոր դասակարգերի մէջ, 5) Կազմակերպել մասնաւոր հրատարակչական ընկերութիւններ ակցիօններական հիմունքների վրայ, դրադարաններ, դասախոսութիւններ, ժողովրդական թատրոն, շրջիկ ուսուցիչների խմբեր կազմել, որոնք գիտելից գիւղ անցնելով զրագիտութիւն աշարածն ժողովրդի մէջ, 6) Մասնաւոր զարդյուններում եւ պրօֆեսիօնն ուսումնարաններում (ինչպէս կար ու ձեւի դարրոցներն են), մանկական պարտէջներում եւ մասնաւոր շվաններում ու յատուկ կազմեած խմբերում պարապակել հայ լեզուով եւ պատմութեամբ եւն եւն.

## Առանող Ա—ՆԴԵՐԻ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԹԻՒՆ

## ՏԱՄԵՒՆԵՐՈՐԴ ԴԱՐ

## (ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԽՈՅԻԱՎԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

X

XIX-րդ դարի վերջին տասնեւակները ականատեսելան կարեոր յեղաշրջման՝ նւրօպայի քաղաքական աշխարհայեցութեան մէջ։ Տեղական անձուկ շրջանակներից գուրս կալով՝ մեծ պետութիւնները սկսեցին փնտրել լայն հօրիզոններ, սկսեցին բաղձալ „Համաշխարհային քաղաքականութեան“։ Կապիտալիզմը շատ էր ծառայել — նա կարօտում էր շահագործման նորանոր վայրերի։ Ապրանքային արդինագործութիւնը շատ էր ամբարել — պէտք էր որոնել սպառման շուկաներ։ Եւ ցամաքային պետութիւնները — Գերմանիան մասնաւորապէս — իրենց քաղաքական ծրագրների մէջ խոշոր տառերով արձանագրեցին „Գաղղութ աշխարհում“։ Եւ Weltpolitik-ը դարձաւ նշանաբան։

Մինչև 70-ական թւականները Անդլիան միակն էր մեծ պետութիւնների մէջ որ ընդարձակ մտքով մղում էր գաղութային քաղաքականութիւն։ Տիրականօրէն իշխում էր նա ծովերի վրայ, տարածում էր ամէն տեղ, երկրագնդի բոլոր ծայրերում, ազատ, ինքնավար գաղումներ, որոնք բարգաւաճում էին անզօշացնուների օրհնւած ռէժիմի տակ։ Համաշխարհային շուկան գրեթե ամբողջապէս նրան էր պատկանում, համաշխարհային առևտուրը նրա մնաշնորհն էր։ Բրիտանական գրօշը խորհրդանշան էր ծովային զօրութեան և նա չուներ մրցակից։ Բայց ահա եւրոպական ցամաքի քարտեզը յեղաշրջւեց։ Հանդէս եկան նոր-նոր ուժեղ ու կորովի ազգերը, որոնք ազատւելով գոյութեան կուի տանջող մտահոգութիւնից, իրագործելով ազգային անկախութեան իրենց երագիրները՝ խիզախեցին նետուել համաշխարհային մրցաման կրկէսը և իրենց ուժերը փորձել ծովերի միահեծան թագուհու հետ։ Գերմանիան ընդամենը երկու տասնամեակի տարածութեան վրայ այնպիսի անսովոր թուիչքներ արաւ արդիւնաբերութեան ու առեւտի աշխարհում, որ բոլոր ցամաքային ազգերը սկսեցին նախանձել իսկ բրիտանական առիւծը, կարծէք, սթափւած Splendid isolation-ի անուշ երազներից՝ յանկարծ զարկեց ահակոչնակը և գերմանական մրցակցութեան վասնգն ազդարարեց Մեծ Բրիտանիայի քաղաքացներին։

Ս Այնքան ազդու և ահաւոր էր Գերմանիայի կողմից  
սպառնացող վտանգը, որ նրա պատճառով առաջ եկաւ  
Անգլիայում և կամ, յամենայն դեպս, մեծապէս զօրա-  
ցաւ մի ամբողջ հոսանք, որը թէպէտե սուր քննադա-  
տութիւնների առարկայ. և այսօր, բայց միանգամայն  
բանաւոր ու արդարացի է բրիտանական շահերի պաշտ-  
պանութեան տեսակէտից:

Այդ հոսանքն է՝ իմ պերի ալիքը մակամ Պանալը իտանի տանի զմբեկությունը: Ինչպէս ամեն մի ուրիշ հոսանք, նաև ես ունի իր ծալքայեղութիւնները, իր ստւերային կողմերը: Նա է, որ խրախուսում է այսօր քստմենիք, ըմբռատեցուցիչ պատերազմը երկու թգուկ հանրապետութիւնների գեղմ: Համաձարակ ախտի պէս նա թօննաւորել է անդրօ-սաքսոնների բովանդակ երկիրը, անգամ ազատամիտ կուսակցութեան մէկ ճիւղը՝ յանձին Ռոզբերիների՝ մոռանալով իր պանծալի տրագիֆիաները՝ տալբում է շօվինիզմի այդ հոսանքով և մի չնչին փոքրամասնութիւն, որ խիզախում է պաշտպան կանգնել դիւցազն բօյէրներին, պահանջելով նրանց համար լիակատար անկախութիւն, որպահում է „Little Englanders” հեգնական մականունով:

Գերմանիայի, առաջընթացութիւնը գաղութային քաղաքականութեան ասպարէզում անվիճելի է և նրան վիճակւած է թերեւ շատ ծանրակշիռ փոփոխութիւններ առաջացնել միջազդ ային յարաբերութիւնների մէջ: Այլ հէլմ կայսրը որ հոյակապ ծրագիրների սիրահար է և որ քանից հրապարակեց ի լուր աշխարհի փքուն, բայց նշանակալից ֆրազը՝ «մը ապագան ջրերի վրայ է»— Ուշէմ կայսրը անձամբ քիչ չէ նպաստում գերմանական հմայքի ածման՝ հայրենիքից դուրս:

Անդղեայի հետ ծովերի վրայ մրցման բռնւելով՝ նա միաժամանակ տեսդային փութեատութեամբ մղում է իր յատուկ ուժիւրքական քաղաքականութիւնը<sup>1</sup>, որի նպատակն է գերման կայսրութեան ծաւալումը Բօսֆօրի ափերից մինչև Պարսկական ծոցը. Պանգերմանիզմի նվիրական երազն է այդ. պիտի իրագործւի արդեօք. . . Բաղդադի երկաթուղային հսկայ նախադիմքը մի խոշոր քայլ է գեպի այդ նպատակը:

Քայլ տաճկական արեւելքում Գերմանիան հանդիպում  
է աւելի հզօր մի ախոյթանի, որ վաղուց ի վեր սովորել  
է իր սեփականութիւնը համարել ոչ հիւանդ մարդու՝  
ամբողջ ժառանգութիւնը: Ալավօն ու Տեփտօն կը բռնւին,  
գոյց, աչեղ մենամարտի... Գերման-ուուսական անտա-  
դօնիզգի խուլ ձայներն են հնչւում առայժմ, բայց այդ  
ձայները ոչ հեռու ապագայում կարող են փոխւել  
աչարկու փոթորիկների:

Գերմանիայի երեսն գալը օսմանեան թատերագիւմում  
խիստ ծանրակշիռ մի հանդամանք է, որը չի կարող  
չ'անդրադառնալ նաև ուսւ-թիւրքական յարաբերու-  
թիւնների վրայ. Կան նոյնիսկ մարդիկ—և ոչ անշան—  
որոնք մարդարեանում են, թէ այդ հանդամանքը կարող  
է մինչեւ իսկ որոշ մեր ձեզ ու մ առաջանել երկու  
դարաւոր, անհաշտ ախորեանների Առուսաստանի և Ան-  
գլիայի միջև... Աւշագրաւ են բրիտանական *National  
Review*-ի վերջերս հրատարակած (և կիսապաշտօնապիտ  
սերշնչած) յօդւածները, որոնք անգլո-ռուսական հա-  
մաձայնութեան գաղափարն են թելարքում մերձաւոր  
ու հեռաւոր Ասիայի վերաբերմամբ՝ փոխադարձ զիջում-

ների խարիսխի գրայ, — մի համաձայնութիւն, որ յայտնապէս նպատակ կունենայ թումբ կանգնեցնել զերմանական արշաւանքի դէմ: Յամենայն դէպս, Փօքը Ասիայում ստեղծում է այսօր հակամարտ շահերի նոր ու կատաղի մրցակցութիւն և մօտիկ ապագան յղի է թերեւս մեծամեծ անակնկաներով. . .

六

Մինչ եւրօպական այետութիւնները՝ իբրև հաւատարիմ  
թարգման բուրժուազական ինտերեսների՝ ձգտում են  
այդափառով նորանոր հողեր նւաճել թափանցել երկրա-  
գնդի հեռաւոր խորշերը և արեան հեղեղների գնով  
տարածել այնտեղ կապիտալիզմի յարաձուն բերքերը.  
մինչ աղդերի պաշտօնական ներկայացուցիչները յանուն  
իրենց կաստային շահերի՝ գիտակցաբար կամ ակամար  
բորբոքում են անտագօնիզմը առանձին ազգերի միջեւ,  
նիւթում են ոճրագործ պատերազմներ, արատաւորում  
են մշտագէս քաղաքակրթութեան դրոշը—իրենք այդ  
ազգերը միշտ աւելի և աւելի լուսաւորելով իրենց կա-  
ցութեան վերաբերմամբ, միշտ աւելի ըմբռնելով հասա-  
րակական էւօլիցիայի օրէնքները, տարւում են հետզհետէ  
այս փրկարար ու տարերաբին հոսանքով որ առաջնոր-  
դում է գեղի մարդկայնութեան վերջնական յաղթա-  
նակը:

Բուրժուազիան անտառը սիստեմի տարկանոնութիւններից զգւած և իր վեհ, համաշխարհային առաքելութեանը գիտակից՝ աշխատաւոր ընդհանրութիւնը բոլոր երկներում ստւար լէգիօններով սեղմւում, համակարգում է ընկերվարական դրօշակի շուրջը և անդիմադրելի կերպով քարշում է իր ետևից հակառակորդ գասակարգի բոլոր ազնիւ շիտակ ու արդարամիտ տարրերը, որոնց զգացումներին չափագանց նեղ է դարձնելի կապիտալի աւետարանը:

Հզօր ու կավաճակերպւած մամուլ, ընդարձակ, գիտական գրականութիւն, համաշխարհային, ներդաշնակ պրօպագանդի, լուրջ ու կորովի ներկայացուցչութիւն ազգային պատգամաւորական ժողովներում - աշա թէ ինչ է ներկայացնում սօցիալիզմը XX-րդ դարի արշալոյսին: Եւ այդ ուժեւ է, որ այնքան անսովոր կենդանութիւն է ներշնչում պարլամենտներին ու հրապարակական ժողովներին, մերկացնելով անդադար ու պաշտօնական՝ ամէն տեսակ անիբաւութիւններ, որոտալով պատերազմների ու գաղութային քաղաքականութեան դէմ, պաշտպանելով բոյոր թշւառների ու հարածւածների դատար:

Բաժանւած թէօրիհական խնդիրներում՝ սօցիալիզմը գործնականի մէջ ներկայացնում է ամբողջական, ներդրաշնակ մի շարժում, որը միևնույն ձայնն է հնչեցնում եւրոպայում և Ամերիկայում, միևնոյն քննադատութիւնն է ուղղում բուրժուազիան հասարակութեան դէմ, միևնոյն իդէալն է քարոզում և միևնոյն միջոցները դէպի իդէալի իրագործումը։ Քրիստոնէութեան առաջին դարերից ի վեր եւրոպական քաղաքակրթութիւնը չի տես սել նմանօրինակ հզօր ու համաշխարհային մի շարժում եւ երբ ականատես էք լինում սօցիալիզմի միջադրամին կօնդրէսներին, ուր ամենափոքրիկ դեռ նոր թիւր քային կօնդրէսներին, ուր ամենափոքրիկ դեռ նոր թիւր պատշաճաւոր տեղին են դրաւում, երբ ու Մարտինիկով

կամ „Խնտերնացիօնալի“ մարտական շառաչը թնդացնում է հսկայ դահլիճի կամարները — ինչ որ թոփիքու խորհրդաւոր բան էք զգում այդ սրբազն ոգեստութեան մէջ և ձեր աչքերի առջև աղօտ կերպով պատկերանում է ապագայի մշուշներում կորած, մարդկութեան առաքեալների հնուց երազած ճշմարիտ համամարդկային գերդաստանը... .

Ըսկերլարական շարժման այդ պրօդրէսիլ ծաւալումը ունի արդեօք իր տեղը այն գործօնների շարքում, որոնք պայմանաւորում են պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները, ուրեմն նաև տիեզերական քաղաքականութիւնները: Անշուշտ: Կոմմունարի“ հսկայական դրաման, որ պատմեցինք մեր տեսութեան նախընթաց էջերում, մշտնջենական ապացոյց է, որ քաղաքակրթւած մեծ պետութիւնները չեն կարող հաշվի չառնել արդ ահարկութեք փոխադարձ ընդհարումների գէպքում: Մի Գերմանիա, որքան և լինի նա հզօր ու պատկառելի չել կարող այնուամենայնիւ, թեթեւ սրտով պատերազմ՝ յայտնել մի ուրիշ մեծ պետութեան, քանի որ նրա ներսում, որպէս մարմացած սպառնալիք, կանգուն է միշտ սօցիալիստական միջնաւոր բանակը: Արդէն Վլիչէլմ կայսրին լուրջ մտահոգութիւն է պատճառում այն հանդամանքը, որ Հօհենցոլեների վեհաջուք մայրաքաղաքը գրեթէ ամբողջապէս սօցիալիզմի գիրին է անցել:

Միւնոյն սերքին տագնապների“ սարսափով համակած են նաև միւս քաղաքակրթ պետութիւնները: Այդ է պատճառը՝ գուցէ գլխաւոր, էական պատճառը՝ որ նրանք բռլորն էլ խոյս են տալիս փոխադարձ ընդհարումներից, թէ միաժամանակ իւրաքանչիւրը նրանցից հետապնդում է հեռաւոր ու թոյլ գոհերի և պատրաստ է ամէն առթիւ յարձակել այդպիսների վրայ՝ իր գիշատիչ ամորժակիւրին յագուրդ տալու համար: Այդ է պատճառը, որ երօպական գիւղակիւրը նաև ոռւսաց վեհապետը, որ իր բռնապետական ցուրտ դիւնատնից յանկարծակի հրապարակ նետեց 19-րդ դարի ամենանշանաւոր դօկումենտներից մէկը՝ “պինընկէցութեան”, “սիեթերական խաղաղութեան” հրովարտակը... .

Եզրակացնենք: Մենք ուրեագծեցինք Եւրօպայի քաղաքական ու սօցիալական էլուիցիան յընթացս 19-րդ դարի: Ամփոփենք աժմ մեր ասածները մի քանի խօսքով և տեսնենք, ինչ հրահանգներ կարող ենք քաղել մեզ համար այդ հակիրճ տեսութիւննից վենց հետևեցինք ազգայնական-ազատագրական շարժումներին և ականատես եղանք ստրկացած մանր ու խոշոր երկրների վերածնութեան: Բռնակալական սարսափների հետ միասին արձանագրեցինք ընդկումի վեմ խոյանքները, գիւցազնական պայքարի սրտառուչ էպիգոնները:

Մենք գծեցինք զուգընթացար սօցիալական մեծ շարժման ելակչները, պրօլետարական դիւցազներքութեան արհարակալց պատմութիւնը և տեսնենք, որ ամէն աեղ ըստ էութեան նման է պայքարը: Թշնամին, դահիքը մէկ է բռնութիւնը իր այլազն ձեւրագ մէկ տեղ միահեծան պետի, միւս տեղ՝ կապիտալի բռնութիւնը մի այլ տեղ՝ երկուսը միասին: Մէկ է և իդէալը, մէկ է

դաւանանքի, կուլտի առարկան — ծողով ու ը գլ իր մաքուր բնապետմներով և իր անբաւ ցաւերով: Նման է կուղոների հոգեբանութիւնը, նման են և կուի միջոցները: Ազատ ու անվեհներ հայդուկը Յունաստանի և Ասպուրականի ձորի բուռ, սարսափերի Կարբօնարին Ապենիների վրա, Առաքինութեան գաշնակիցը երիտասարդ Գերմանիայի մէջ խստաբարոյ հայրեանիայի մէջ խստաբարոյ նիհիլիստը ցարերի հայրեանի բլանկիստ պարիզեան արուար առաջնորդում կամ Բլանկիստ պարիզեան արուար առաջնորդում — բոլորն էլ ծողով գլ ի խսնդավառ բարեկամներ, բոլորն էլ տոգորւած սրբազն ատելութեամբ՝ գաւադրում են անվագար, տէսօր են կազմակերպում, երկը լըրպագում են վառօդին, ջատագովում են Սուրբ, Թոյնն ու Աւտանակը: Կորիւր երկար ժամանակ մուռմ է հողիացած, զոհերը շասնեակ տարիներով հեծում են դժոխային միջնորդում, մեռնում են մութ ու խոնաւ բանտերի մէջ կախաղանի վրայ, մինչև որ ապստամբութիւնը ծաւալւելով հրգեհէլով՝ հարկադրում է իր պահանջները բոնսարդին: . . .

Սարսափելի է պատմական էլուիցիայի ճանապարհը, բայց վհատեցուցիչ չէ... Կարդանիք, շատ կարդանք պատմութիւնը հետաքրքրեւնք ճնշւած ազդերի այդ դարաւոր, արիւնալից պայքարով. Լքման, յուսահատութեան վայրկեաններում շատ սփոփիչ ու սրտապնդող փաստեր կը քաղենք այնտեղից: Որքան հերոսական ճիգեր — ջատաւած ու ապարագին անցած միջավայրին հարաւալիք կորովներ — բախտի անագործին հարաւալիք կամ ճառագային անցած միջավայրին հարաւալիք կորովներ — թառաման... . . Խոնարհւենք այդ պաշտելի նահատակների առջև, օրինակ առնենք նրանցից: Մենք ևս, անտարակոյս, տւինք նման դէմքեր, բայց գեռ շատ պիտի տանք. գեռ շատ պահանջները բայց արեան աստաւծը... . .

Կոիւ է կտակում մեզ 19-րդ դարը — ազգայնական կոիւ նախ և առաջ: Ստանձնենք այդ կտակը և ուշադիր լինենք ժամանակի հրամայական ձայնին: Համերաշխութեան գաղափարը — կուրի անտիպոդը — իր ընդարձակ, տիեզերական իմաստով գեռու նոր է ծայր տալիս, նա գեռ չի մարմնացած: Ճշմարիտ կոմուոլիտիզմը մետաֆիվեկական բանդագուշանք է և իրականութիւնը պատկանում է գեռու ապագայնութեան, “Հայրենասիրութեան” նայեցէք Աւտորիային, չնայած սօցիալիզմի գդալի առաջադիմութեան՝ որպիսի կատաղի մրցակցութիւնը միւնոյն պետութեան ազգերի միջև. որպիսի ահաւոր փոթորիկներ պատրաստ են ժայթքելու միմիայն լեզվի ինդրից... . . Նայեցէք Գերմանիային, նուսաստանենք դիտեցները լեհական հայրենասիրութեան թուիչքները և ամբողջ լեհ աշխարհի ցատումը Պօլնանի վերջին դէպքերի առթիւ: Անգամ հրէաները, անդամ սօցիալիստ դրոշակի առակ համախմբւած հրէա ինտեղիցենցիան լեհաստանում ու Լիտվայում՝ հրէական պապայ ինքնավարութեան խնդիր է գնում իր կօնդրէսներում: Սիօնիզմ, Պանբրիտանիզմ, Պանդեմանիզմ, Պանսլավիզմ, Պանխոնյն սօցիոլոգիական կատեգորիայի տարրեր արտայայտութիւններն են

Այս իրականութիւնը գեռ հսկայական մի մարտադաշտ է, ուր ազգեր ու ցեղեր փոխադարձ ատելութեամբ տոգորւած: Գրոհ են տալիս իրար դէմ—և վայ յաղթածին: Խրաքանչերը մի ազգ, իր բոլոր էներգիայով ու բոլոր զենքերով հաստատում է իր գիրքը արեգակի տակ: Մենք ևս պիտի անենք այդ: Հանդէպ այն կանում ու ահեղ տեսարանին, ուր տիրանները ձեռք ձեռքի տւած յօցուութիւնները են մեզ, ձգտելով խաչ գնել մեր ազգայնական:

կան գործութեանը՝ պիտի ուղղենք մեր բոլոր ջանքերը  
դեպի աղքային ինքնապաշտպանութիւն։ Հանդէպ հրեաց-  
ման յարանուն վուանդին, հանդէպ բարոյական սրարշաւ-  
այլասեռութան, որ ապանձում է իսպառ անդամայութեց  
մեր ժողովրդի և ինտելիգենցիայի էամբը՝ պիտի գործենք  
փութով, առանց յապարհուու։

Ըտապէննք, Պատմութեան անիւը թշտալում է արեան  
ու արտասուզների միջեց, պաղ ու անտարգանքը դեպի  
Ճնշւածների հեծկլտոցները: Նա բարձրացնում ու պատ-  
ւառը դիրք է տալիս գոյութեան մնամաբարի յաղջող-  
ներին և կօխիւատում. անդունք է գլորում՝ նրա զոհե-  
րին: Զմոռանանք այդ. Մի վայրկեան ևս անդրագաւու-  
նանք պատմական մերձաւոր անցեալի վրայ և խոր ար-  
ձանագրինք մեր գիտակցութեան մեջ այս ցայտուն իրո-  
ղութիւնը՝ որ ստրուկ ազգերն ու դս սակարգերը երբեք  
չեն մոռացել իրենց իրաւունքները, այլ զէնցը ձեռին  
յափշտակել են նրանց: Գիտակ այդ տիեզերական ան-  
ողոք ճշմարտութեան՝ ստւարացնենք ու սեղմենք մեր շար-  
քերը, լինենք կազմ ու պատրաստ անդուր, յուսահատ  
պայքարի համար, և ցոյց տանք արդպիսով՝ որ մենք ևս  
արժանի ենք քաղաքակրթաւած ազգերի մէջ գերդաստաննեն:

କୁଳାଲ ପାତାଳ ମହିଳା ଦେଖିଲା କିମ୍ବା କିମ୍ବା

չԱՅԱՍՏՈՒԾ ԵՐ ՔԵԴԱՅԹՆԵՐԸ. Մուշի սիրու ու գեղեցիկ  
դպասը, ուր եղ ու մողը կը բլիփ, կը վանի. գիշեր, աւաններ,  
տունքի դէզեր մծիլիք ու աւերակ գարծած են: ծաբճատող սոցեր՝  
մութ ծուխի քուլաներով կը լավեն եթերը, կժոխի երազանքը  
տալով: Արճաւերը նուանի թեւերով կ'արշաւէ այդ լացի նովիդին  
մէջ, սարսափանաք նորիգոնիկու մէջտեղ, ուր մնենաներու,  
